

Պարրոտը, «Արուվեանին իր հետ Դորպատ է տանում ու հայրաքար հոգում նրա ուսման կատարելագործութեան համար»:

Այդ կապակցութեան մէջ Բ. ասում է (էջ 298), որ երիտասարդ Արուվեան, «չնորհիւ իր ընդունակութեան եւ անխոնջ աշխատասիրութեան», Դորպատում արդէն «երեք տարուայ ընթացքում ձեռք բերաւ ոչ միայն հիմ, այլ եւ նոր լեզուները մի այնպիսի հիմնաւոր գիտութիւն, որ ամենէն դժուարը այդ լեզուներից, գերմաներէնը, անխալ կերպով խօսում էր ու գրում, առանց երեւալու, որ օտարազգի է ինքը»:

Վերոյիշեալ տողերի մէջ նորութիւնը Արուվեանի մասին այն է, որ նա Դորպատում ոչ միայն նոր, այլ եւ հիմ լեզուներ է ուսել:

Մի տեղեկութիւն, սակայն, որ, մեր գիտնալով, չէ հաստատում ուրիշ աղբիւրներից: Հայրեմիքում Ա. ի ունեցած գործունէութեան յիշատակութիւնը անկող՝ Բ. նախապէս հաղորդածները վրայ նոր բան չէ աւելացնում: Այդ կապակցութեան մէջ նա ասում է, որ նրա, Արուվեանի, աշակերտներից չատերը յետագային Գերմանիայում կատարելագործում են իրենց ուսումը եւ հայրենիք վերադառնալուց յետոյ իրենց ուսուցչի ոգով գործունէութիւն ունենում, «այնպէս որ ըստ էութեան նրանից (Ա. - ից) են ծագում այն բոլոր նախաձեռնութիւնները, որոնց չնորհիւ վերջին տասնամեակների ընթացքում, գերման ազգեցութեան տակ, հայկական մի բոլորովին նոր գրականութիւն է ի կեանս կոչուել»:

«Հայաստան այցելածս միջոցին, — գրում է Բողենչտէզտ 1888-ին իր «Յուշեր»ում, — այնտեղ առհասարակ տակաւին գոյութիւն չուներ այսպէս կոչուած գեղեցիկ գրականութիւն, եթէ հաշուելու չլինինք մի քանի սակաւաթիւ թարգմանութիւններ օտար լեզուներից, այն էլ կատարուած արտասահմանում եւ մեծ մասով Վենետիկի Միթիթարեանների մօտ տպագրուած: Միակ հայը, որ այն ժամանակ հմուտ էր գերմաներէնին, եւ որի հետ մենք ծանօթացանք իր հայրենիքում, դա Արուվեանն էր. ու միակ գերմանացին Նրեւանում, որի հետ պատեհ առիթներով խօսակցել կարող էր նա (գերմաներէն), դա քաղաքի բերդապետ (Kommandant) գնդապետ Ֆոն Դիլն (von Kiel) էր:

«Ուրեմն դիւրին է հասկանալ այն (մտաւոր) յեղաշրջումը, որ այդ ժամանակից ի վեր կատարուել է հայոց մէջ, եթէ ես նկատեմ այստեղ, որ Հայաստանը այսօր ոչ միայն տէր է մի՝ ըստ ամենայնի բարձր գնահատութեան արժանի սեփական գեղեցիկ գրականութեան, այլ եւ հայ են մեծ մասով այն անհատները, որոնք իրենց ազգի լաւագոյն հեղինակների երկերը գերմաներէն են թարգմանում:

«Իմ առջեւ են գտնուում այս րոպէին, երբ ես գրում եմ այս տողերը, հինգերորդ եւ վեցերորդ հատորները այն մատենաշարի, որ պարունակում է (հայերէն) մի շարք վէպեր ու պատմութեան (գերմաներէն թարգմանութեամբ), եւ որը կրում է «Հայկական Մատենադարան» (Armenische Bibliothek) ընդհ. վերնագիրը (լոյս տեսած Լայպցիգում, Վ. Ֆրիդրիխի մօտ) ու հրատարակում է Արգար Յովհաննիսեանի(10) կողմից: Վերջին չորս հատորները թարգմանել են հայ անհատներ, իսկ առաջին երկուսը՝ ներկայիս Թիֆլիսում ապրող մի գերմանացու՝ Արքուր Լայպտի(11) թարգմանութիւնն է:

«Վերջինս տարիներից ի վեր արդիւնաշատ ջանքեր է անում՝ վրացական եւ հայկական գրականութեան բոլոր արժէքաւոր ու նոր գործերը հարազատ թարգմանութեամբ եւ բանաստեղծական հետեւողութեամբ մարտչելի դարձնել մեզ»:

* * *

Արուվեանի մասին Բողենչտէզտի հաղորդած տեղեկութիւնները հարկաւ հեռու են ըստ պատիւ լինելուց, մի երկու մանրամասների մէջ նրանք մինչեւ իսկ կարօտ են յատուկ լուսաբանութեան, բայց եւ այնպէս խիստ շահեկան

10) Արգար Յովհաննիսեանը «Փորձ» ամսագրի ու «Արձագանգ» շաբաթաթերթի (յետոյ օրաթերթ) խմբագիր-հրատարակչն էր: Ուրիշ անգամ թերեւս առիթ ներկայանայ մի վեճը աւելի կանգ առնելու «Հայկական Մատենադարան» շարքի վրայ:

11) Արքուր Լայպտը մինչեւ այժմ էլ ապրում է, զառամած բոլորովին, Թիֆլիսում: Առանձին հատորիկով եւ կրկնակ տպագրութեամբ լոյս է տեսել նաեւ նրա «Հայ բանաստեղծներ» թարգմանական ժողովածուն: